



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, Երևան 0095, Մ. Բաղրամյան պող. 19, հեռ.՝ 011513351, zaruhi.batoyan@parliament.am

24.02.2026

ՀՀ ԱԺ նախագահ

պարոն Ալեն Սիմոնյանին

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների պահանջները՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում եմ ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին», ««Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի Աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) նախագծերը,

բ) նախագծերի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքների փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում եմ, սահմանված կարգով օրենքների նախագծերի փաթեթը դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Զարուհի Բաթոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «քաղաքացիների ընդունելություն» բառերից հետո լրացնել «քաղաքացու ցանկության դեպքում նաև էլենտրոնային կապի միջոցների կիրառմամբ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Գործող կարգավորումներով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով ամրագրված է պատգամավորների կողմից քաղաքացիների ընդունելության պարտականությունը, որը ընդունելության ձևաչափը սահմանափակվում է միայն ֆիզիկական ներկայությամբ իրականացվող հանդիպումներով:

| Տարածաշրջան | 2024 թվական | 2025 թվական | Մասնաբաժինը 2025թ. ընդհանուրի մեջ |
|-------------------------|----------------|----------------|--------------------------------------|
| ՀՀ Մարզեր (ընդամենը) | 112 | 162 | ~14% |
| ք. Երևան | 728 | 980 | ~86% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 840 | 1142 | 100% |

*Աղբյուր՝ Աժ աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և նամակների
բաժին:*

Ներկայացված վիճակագրությունը փաստում է քաղաքացիների ընդունելության գործընթացում առկա ակնհայտ տարածքային անհամաչափությունը: Չնայած քաղաքացիների ընդհանուր դիմելիության աճին, մարզերում բնակվող անձանց մասնակցությունը շարունակում է մնալ չափազանց ցածր մակարդակի վրա՝ համեմատած Երևան քաղաքի հետ:

Ներկայացված տվյալների համադրումը փաստում է, որ քաղաքացիների ընդունելության գործընթացում առկա տարածքային անհամաչափությունը կրում է կայուն բնույթ: Թե՛ 2024 և թե՛ 2025 թվականներին Ազգային ժողովի հետ անմիջական

հաղորդակցության հնարավորությունից օգտվել են գերազանցապես մայրաքաղաքի բնակիչները:

2024 թվականին հերթագրված 840 քաղաքացիներից մարզերի բնակիչները կազմել են ընդամենը 13.3% (112 անձ), մինչդեռ երևանցիները՝ 86.7% (728 անձ):

2025 թվականի տվյալներով՝ ընդունելության հերթագրված 1142 քաղաքացիներից շուրջ 86%-ը (980 անձ) երևանի բնակիչներ են, այն դեպքում, երբ ՀՀ բոլոր մարզերի բնակիչների ընդհանուր մասնաբաժինը կազմում է ընդամենը 14% (162 անձ):

Այս վիճակագրական պատկերը հստակ ցույց է տալիս, որ գործող «Ֆիզիկական» ընդունելության ծնաչափը ստեղծում է անհավասար պայմաններ և դառնում է «աշխարհագրական արգելք» մարզերի բնակիչների համար: Մարզաբնակ քաղաքացիները, չունենալով առցանց հաղորդակցման օրենսդրորեն ամրագրված հնարավորություն, փաստացի զրկվում են պատգամավորի հետ անմիջական կապ հաստատելու մատչելի իրավունքից՝ երևան ժամանելու հետ կապված տրանսպորտային, ժամանակային և ֆինանսական բեռի պատճառով:

Վերոնշյալ տվյալները վերահաստատում են նախագծի ընդունման հրատապությունը. առցանց ընդունելության մեխանիզմի ներդրումը միակ միջոցն է վերացնելու այս անհամաչափությունը և ապահովելու Ազգային ժողովի հասանելիությունը ՀՀ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց բնակության վայրից:

Գործնականում բազմաթիվ քաղաքացիներ՝ հատկապես մարզերում բնակվող մարդիկ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները կամ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող քաղաքացիները, բախվում են Ազգային ժողովում ֆիզիկական ընդունելության մասնակցելու օբյեկտիվ դժվարությունների, ինչի հետևանքով սահմանափակվում է նրանց՝ պատգամավորի հետ անմիջական շփման և խնդիրների բարձրաձայնման իրավունքի իրացումը:

Գլոբալ թվայնացման և «Թվային օրակարգի» համատեքստում, տեղեկատվական տեխնոլոգիաներն այլևս լոկ օժանդակ գործիքներ չեն, այլ ժողովրդավարական ինստիտուտների կենսագործունեության հիմնական միջավայրը: Չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում պետական կառավարման համակարգի անցումը «Smart Governance» (Խելացի կառավարում) մոդելին ենթադրում է ֆիզիկական և թվային տիրույթների միաձուլում, որտեղ քաղաքացու գտնվելու վայրը չպետք է հանդիսանա խոչընդոտ պետական մարմինների հետ հաղորդակցվելիս:

Աշխարհում բազմաթիվ երկրներ գործադրում են քաղաքացիների առցանց ընդունելության և առցանց մասնակցության մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս քաղաքացիներին ուղղակիորեն կամ մասամբ դիմել պատգամավորներին կամ օրենսդիրներին՝ գտնվելով որևէ այլ վայրում:

Միայն ֆիզիկական ներկայությամբ իրականացվող հանդիպումների կարգավորումը լիարժեք չի արտացոլում ժամանակակից հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքը և չի ապահովում քաղաքացիների մասնակցության և հասանելիության համարժեք մակարդակ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս այսօր անարգել պահպանել հաղորդակցությունը քաղաքացիների հետ՝ տեսազանգերի միջոցով, ինչը Հայաստանի Հանրապետությունում առանձին դեպքերում կիրառվում է ԱԺ պատգամավորների կողմից՝ իրենց նախաձեռնությամբ կամ քաղաքացիների առաջարկով:

Ուստի առաջանում է անհրաժեշտություն օրենսդրորեն ամրագրել քաղաքացիների ընդունելության այլընտրանքային, ժամանակակից և հասանելի մեխանիզմներ ևս:

Կարգավորումը չի պարտադրում բացառապես առցանց ընդունելություն, այլ ապահովում է ճկուն մոտեցում՝ թողնելով ընտրության իրավունքը քաղաքացուն: Այն

ուղղված է գործող կարգի լրացմանը՝ առանց պատգամավորների լիազորությունների կամ պարտականությունների ծավալի փոփոխության:

Առցանց ընդունելության հնարավորության օրենսդրական ամրագրումը համահունչ է պետական կառավարման թվայնացման քաղաքականությանը և հանրային ծառայությունների մատչելիության բարձրացման ընդհանուր ուղղությանը:

Ժամանակակից տեխնոլոգիական լուծումները (ամպային տեխնոլոգիաներ, անվտանգ տեսակապի հարթակներ, նույնականացման էլեկտրոնային համակարգեր) երաշխավորում են ոչ միայն հաղորդակցության անընդհատությունը, այլև ապահովում են տվյալների պաշտպանվածության և թափանցիկության բարձր մակարդակ:

Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի թիվ 1133 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քաղաքացիների ընդունելության կարգով սահմանվում է Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի և մշտական հանձնաժողովների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման և իրականացման կարգը, այդ թվում՝ քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումների (նաև էլեկտրոնային կապի միջոցներով ներկայացված) գրանցման և դրանց ընթացքի ապահովման գործընթացը, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից իրականացվող ընդունելության շրջանակներում կիրառվող կազմակերպչական ընթացակարգերը:

Օրենքների ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քաղաքացիների ընդունելության կարգով կարող են սահմանվել էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ քաղաքացիների ընդունելության եղանակները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է պատգամավորի պարտականություններում սահմանված քաղաքացիների ընդունելությանը վերաբերող կարգավորումը լրացնել՝ քաղաքացու ցանկության դեպքում նաև էլենտրոնային կապի միջոցների կիրառմամբ հնարավորության ամրագրումով:

3. Ակնկալվող արդյունքը

Օրենքների նախագծերի ընդունման արդյունքում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին օրենքներով սահմանված պատգամավորների պարտականություններում կամրագրվի նաև էլենտրոնային կապի միջոցների կիրառմամբ քաղաքացիների ընդունելության հնարավորությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 4. Պատգամավորի պարտականությունները

1. Պատգամավորը պարտավոր է՝

1) ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ Կանոնակարգի 11-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերի.

2) մասնակցել Ազգային ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին.

3) մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին.

4) պահպանել պատգամավորական էթիկայի կանոնները.

5) ապահովել պատգամավորական մանդատի անհամատեղելիության պահանջների կատարումը.

6) կազմակերպել քաղաքացիների ընդունելություն՝ քաղաքացու ցանկության դեպքում նաև էլենտրոնային կապի միջոցների կիրառմամբ, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակում օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիների գրավոր առաջարկներին.

7) պահպանել Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի
գործունեության երաշխիքների մասին» 2017 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-20-Ն
օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «ընդունելությունը.» բառը
փոխարինել «ընդունելություն՝ քաղաքացու ցանկության դեպքում նաև էլենտրոնային
կապի միջոցների կիրառմամբ.» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Գործող կարգավորումներով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով ամրագրված է պատգամավորների կողմից քաղաքացիների ընդունելության պարտականությունը, որը ընդունելության ձևաչափը սահմանափակվում է միայն ֆիզիկական ներկայությամբ իրականացվող հանդիպումներով:

| Տարածաշրջան | 2024 թվական | 2025 թվական | Մասնաբաժինը 2025թ. ընդհանուրի մեջ |
|-------------------------|----------------|----------------|--------------------------------------|
| ՀՀ Մարզեր (ընդամենը) | 112 | 162 | ~14% |
| ք. Երևան | 728 | 980 | ~86% |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 840 | 1142 | 100% |

Աղբյուր՝ ԱԺ աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և նամակների բաժին:

Ներկայացված վիճակագրությունը փաստում է քաղաքացիների ընդունելության գործընթացում առկա ակնհայտ տարածքային անհամաչափությունը: Չնայած քաղաքացիների ընդհանուր դիմելիության աճին, մարզերում բնակվող անձանց մասնակցությունը շարունակում է մնալ չափազանց ցածր մակարդակի վրա՝ համեմատած Երևան քաղաքի հետ:

Ներկայացված տվյալների համադրումը փաստում է, որ քաղաքացիների ընդունելության գործընթացում առկա տարածքային անհամաչափությունը կրում է

կայուն բնույթ: Թե՛ 2024 և թե՛ 2025 թվականներին Ազգային ժողովի հետ անմիջական հաղորդակցության հնարավորությունից օգտվել են գերազանցապես մայրաքաղաքի բնակիչները:

2024 թվականին հերթագրված 840 քաղաքացիներից մարզերի բնակիչները կազմել են ընդամենը 13.3% (112 անձ), մինչդեռ երևանցիները՝ 86.7% (728 անձ):

2025 թվականի տվյալներով՝ ընդունելության հերթագրված 1142 քաղաքացիներից շուրջ 86%-ը (980 անձ) երևանի բնակիչներ են, այն դեպքում, երբ ՀՀ բոլոր մարզերի բնակիչների ընդհանուր մասնաբաժինը կազմում է ընդամենը 14% (162 անձ):

Այս վիճակագրական պատկերը հստակ ցույց է տալիս, որ գործող «Ֆիզիկական» ընդունելության ձևաչափը ստեղծում է անհավասար պայմաններ և դառնում է «աշխարհագրական արգելք» մարզերի բնակիչների համար: Մարզաբնակ քաղաքացիները, չունենալով առցանց հաղորդակցման օրենսդրորեն ամրագրված հնարավորություն, փաստացի զրկվում են պատգամավորի հետ անմիջական կապ հաստատելու մատչելի իրավունքից՝ երևան ժամանելու հետ կապված տրանսպորտային, ժամանակային և ֆինանսական բեռի պատճառով:

Վերոնշյալ տվյալները վերահաստատում են նախագծի ընդունման հրատապությունը. առցանց ընդունելության մեխանիզմի ներդրումը միակ միջոցն է վերացնելու այս անհամաչափությունը և ապահովելու Ազգային ժողովի հասանելիությունը ՀՀ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց բնակության վայրից:

Գործնականում բազմաթիվ քաղաքացիներ՝ հատկապես մարզերում բնակվող մարդիկ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցները կամ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող քաղաքացիները, բախվում են Ազգային ժողովում ֆիզիկական ընդունելության մասնակցելու օբյեկտիվ դժվարությունների, ինչի

հետևանքով սահմանափակվում է նրանց՝ պատգամավորի հետ անմիջական շփման և խնդիրների բարձրաձայնման իրավունքի իրացումը:

Գլխավ թվայնացման և «Թվային օրակարգի» համատեքստում, տեղեկատվական տեխնոլոգիաներն այլևս լոկ օժանդակ գործիքներ չեն, այլ ժողովրդավարական ինստիտուտների կենսագործունեության հիմնական միջավայրը: Չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում պետական կառավարման համակարգի անցումը «Smart Governance» (խելացի կառավարում) մոդելին ենթադրում է ֆիզիկական և թվային տիրույթների միաձուլում, որտեղ քաղաքացու գտնվելու վայրը չպետք է հանդիսանա խոչընդոտ պետական մարմինների հետ հաղորդակցվելիս:

Աշխարհում բազմաթիվ երկրներ գործադրում են քաղաքացիների առցանց ընդունելության և առցանց մասնակցության մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս քաղաքացիներին ուղղակիորեն կամ մասամբ դիմել պատգամավորներին կամ օրենսդիրներին՝ գտնվելով որևէ այլ վայրում:

Միայն ֆիզիկական ներկայությամբ իրականացվող հանդիպումների կարգավորումը լիարժեք չի արտացոլում ժամանակակից հասարակական հարաբերությունների զարգացման ընթացքը և չի ապահովում քաղաքացիների մասնակցության և հասանելիության համարժեք մակարդակ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս այսօր անարգել պահպանել հաղորդակցությունը քաղաքացիների հետ՝ տեսազանգերի միջոցով, ինչը Հայաստանի Հանրապետությունում առանձին դեպքերում կիրառվում է ԱԺ պատգամավորների կողմից՝ իրենց նախաձեռնությամբ կամ քաղաքացիների առաջարկով:

Ուստի առաջանում է անհրաժեշտություն օրենսդրորեն ամրագրել քաղաքացիների ընդունելության այլընտրանքային, ժամանակակից և հասանելի մեխանիզմներ ևս:

Կարգավորումը չի պարտադրում բացառապես առցանց ընդունելություն, այլ ապահովում է ճկուն մոտեցում՝ թողնելով ընտրության իրավունքը քաղաքացուն: Այն ուղղված է գործող կարգի լրացմանը՝ առանց պատգամավորների լիազորությունների կամ պարտականությունների ծավալի փոփոխության:

Առցանց ընդունելության հնարավորության օրենսդրական ամրագրումը համահունչ է պետական կառավարման թվայնացման քաղաքականությանը և հանրային ծառայությունների մատչելիության բարձրացման ընդհանուր ուղղությանը:

Ժամանակակից տեխնոլոգիական լուծումները (ամպային տեխնոլոգիաներ, անվտանգ տեսակապի հարթակներ, նույնականացման էլեկտրոնային համակարգեր) երաշխավորում են ոչ միայն հաղորդակցության անընդհատությունը, այլև ապահովում են տվյալների պաշտպանվածության և թափանցիկության բարձր մակարդակ:

Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի թիվ 1133 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քաղաքացիների ընդունելության կարգով սահմանվում է Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի և մշտական հանձնաժողովների կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման և իրականացման կարգը, այդ թվում՝ քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումների (նաև էլեկտրոնային կապի միջոցներով ներկայացված) գրանցման և դրանց ընթացքի ապահովման գործընթացը, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից իրականացվող ընդունելության շրջանակներում կիրառվող կազմակերպչական ընթացակարգերը:

Օրենքների ընդունումից հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քաղաքացիների ընդունելության կարգով կարող են սահմանվել էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ քաղաքացիների ընդունելության եղանակները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է պատգամավորի պարտականություններում սահմանված քաղաքացիների ընդունելությանը վերաբերող կարգավորումը լրացնել՝ քաղաքացու ցանկության դեպքում նաև էլենտրոնային կապի միջոցների կիրառմամբ հնարավորության ամրագրումով:

3. Ակնկալվող արդյունքը

Օրենքների նախագծերի ընդունման արդյունքում «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին օրենքներով սահմանված պատգամավորների պարտականություններում կամրագրվի նաև էլենտրոնային կապի միջոցների կիրառմամբ քաղաքացիների ընդունելության հնարավորությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 11. Պատգամավորի գործունեության ապահովումը

1. Ազգային ժողովի նստավայրում պատգամավորին հատկացվում է կահավորված, տեխնիկական և կապի (այդ թվում՝ համակարգիչ, ինտերնետային կապ) միջոցներով հագեցված աշխատասենյակ, իսկ Ազգային ժողովի նիստերի դահլիճում՝ խոսափողով և անվանական էլեկտրոնային քվեարկության սարքավորումով հագեցված աշխատատեղ:

2. Պատգամավորի գործունեության մասնագիտական սպասարկումն ապահովում են նրա օգնականները և Ազգային ժողովի աշխատակազմը:

3. Օգնականը պատգամավորի հանձնարարությամբ՝

1) նախապատրաստում է պատգամավորի կողմից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերը:

2) նախապատրաստում է պատգամավորի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ վերլուծական, տեղեկատվական և այլ նյութեր:

3) կազմակերպում է պատգամավորի մոտ քաղաքացիների ընդունելությունը՝ ընդունելություն քաղաքացու ցանկության դեպքում նաև էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ:

4) կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով ներկա լինել Ազգային ժողովի հանձնաժողովների հրապարակային նիստերին և խորհրդարանական լսումներին:

5) վարում է պատգամավորին ուղղված փաստաթղթերի գործավարությունը:

4. Պատգամավորի՝ վճարովի հիմունքներով աշխատող օգնականը աշխատանքի է ընդունվում իր դիմումի համաձայն և պատգամավորի ներկայացմամբ՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով:

5. Պատգամավորի՝ վճարովի հիմունքներով աշխատող օգնականը կարող է ազատվել աշխատանքից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով, ինչպես նաև ազատվում է աշխատանքից պատգամավորի լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքում:

6. Իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս պատգամավորի օգնականները օգտվում են պատգամավորի աշխատասենյակից, տեխնիկական և կապի միջոցներից: